21 մարտի 2011 թվականի N 202 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 925-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության բիզնես գործընթացների կանոնակարգման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 925-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 9-րդ, 10-րդ, 13-րդ և 24-րդ կետերը.

2) որոշման հավելվածի 14-17-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման պատասխա-նատուները	Կատարման ժամկետը
14. «ՀՀ կառավարության 2006 թ. դեկտեմբերի 14-ի «Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 1902-Ն	Լիցենզավորման կարգում՝ 1) հստակեցնել սահմանված պարտա-դիր պահանջներն ու պայմանները, ինչպես նաև սահմանել նոր պահանջներ և պայմաններ՝ ինչպես արտադրության, այնպես էլ վաճառքի գործունեության համար. 2) լիցենզիա ստանալու համար	ՀՀ գյուղա-տնտեսության նախարարություն	2011 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ

որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը լրացնել՝ սահմանված պարտադիր պահանջներն ու պայմանները հաստատող փաստաթղթերով. 3) հստակեցնել (կետերով շարադրել) հայտի մերժման հիմքերը. 4) սահմանել, որ լիցենզիան ստորագրվում և կնքվում է լիցենզավորող մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից. 5) փոփոխել հայտի օրինակելի ձևը՝ սահմանելով, որ հայտը ներկայացվում է լիցենզավորող մարմին:		
15. «ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2008 թ. սեպտեմ-բերի 1-ի թիվ 157-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանի մշակում և հաստատում	Հանձնաժողովի կազմը հաստատող նախարարի հրամանում կատարել փոփոխություն և հանձնաժողովը վերանվանել՝ «Գյուղատնտեսության ոլորտում լիցենզավորող հանձնաժողով»:	ՀՀ գյուղա-տնտեսության նախարարություն	2011 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ
16. «Գյուղատնտեսության ոլորտում լիցենզավորող հանձնաժողովի կանոնա-դրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2010 թվականի մայիսի 24-ի N 92-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանի մշակում և հաստատում	Հաստատել գյուղատնտեսության ոլորտում լիցենզավորող հանձնաժողովի կանոնադրությունը, այդ թվում՝ 1) սահմանել հանձնաժողովի եզրակացության ձևաչափը, մասնավորապես՝ դրանում ներառվող տեղեկատվությունը. 2) հանձնաժողովի քարտուղարի գործառույթներում ավելացնել հետևյալը՝ • տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին հանձնաժողովի նիստի վայրի, ամսաթվի և ժամի մասին նիստի կայացման օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ, • պատշաճ ձևով տեղեկացնում է հրավիրված անձին հարցերի քննարկման մասին քննարկումից ոչ ուշ, քան յոթ օր առաջ՝ տեղեկացնելով քննարկման վայրի (հասցեի), ամսաթվի ու ժամի մասին, • նիստի ընթացքում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հանձնաժողովի կողմից որոշում կայացնելուց հետո պատրաստում է եզրակացություն, ապահովում է հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից դրա ստորագրումը, հանձնում կամ պատշաճ ձևով այն ուղարկում է հրավիրված անձին, • ապահովում է հանձնաժողովի հերթական նիստի վայրի, ժամանակի և քննարկվող հարցերի մասին տեղեկատվության հրապարակումը մամուլում և ինտերնետային կայքում նիստի օրվանից ոչ ուշ, քան հինգ օր առաջ:	ՀՀ գյուղա-տնտեսության նախարարություն	2011 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ

17. «Լիցենզավորման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանի մշակում և հաստատում	Մշակել և հաստատել լիցենզավորման ընթացակարգ՝ սահմանելով գործընթացի հաջորդական քայլերի պատասխանատուներին և ժամկետները, այդ թվում՝ 1) սահմանել, որ լիցենզիան ստորագրվում և կնքվում է Լիցենզավորման գործակալության պետի կողմից. 2) սահմանել, որ նախարարության ինտերնետային էջը պետք է համալրվի նոր «Լիցենզավորում» բաժնով, որում պետք է տեղադրվեն դրա հետ կապված բոլոր անհրաժեշտ նյութերը, այդ թվում՝ կարգավորող իրավական ակտերը, լիցենզիա ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը՝ ըստ լիցենզիայի տեսակների և այլն. 3) սահմանել ժամկետ՝ լիցենզավորող մարմնի ղեկավարի կողմից որոշման ընդունումից հետո լիցենզիան պատրաստելու և հայտատուին դրա մասին տեղեկացնելու, ինչպես նաև մերժման մասին տեղեկացնելու համար. 4) սահմանել լիցենզիաների մասին տեղեկատվությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան տեսչություններին ներկայացնելու մասին դրույթ:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2011 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ

».

3) որոշման հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին կետով.

«

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման պատասխանատուները	Կատարման ժամկետը
14.1. «ՀՀ կառավարության 2005 թ. օգոստոսի 25-ի «ՀՀ անասնաբուծության բնագավառում օգտագործվող անասնաբուժական դեղամիջոցների՝ կենսապատրաստուկների արտադրության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 1346-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Լիցենզավորման կարգում՝ 1) սահմանել նոր բաժին «Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմանները» վերնագրով և սահմանել հստակ պահանջներ և պայմաններ. 2) լիցենզիա ստանալու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը համապատասխանեցնել լիցենզավորման պարտադիր պահանջներին ու պայմաններին՝ սահմանելով դրանք հաստատող փաստաթղթերի ներկայացման պահանջ. 3) հստակեցնել (կետերով շարադրել) հայտի մերժման հիմքերը. 4) սահմանել, որ լիցենզիան	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2011 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ

	ստորագրվում և կնքվում է լիցենզավորող մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից. 5) ուժը կորցրած ճանաչել «Մասնագիտական որակավորման ստուգման կարգը» բաժինը. 6) փոփոխել հայտի օրինակելի ձևը՝ սահմանելով, որ հայտը ներկայացվում է լիցենզավորող մարմին. 7) վերացնել այլ հակասություններն ու անճշտությունները (մասնավորապես՝ կետեր 14, 16 և այլն):		

».

4) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 28-33-րդ կետերով.

«

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման պատասխա-նատուները	Կատարման ժամկետը
28. «Գյուղատնտեսության ոլորտում վարչական վիճա-կագրական հաշվետվություն-ների ձևերը և հավաքագրված տվյալների ու տեղեկություն-ների հիման վրա վիճակա-գրական ռեգիստրների վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ գյուղա-տնտեսության նախարարի հրամանի մշակում և հաստատում	Մշակել վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը՝ կողմնորոշվելով «Պետական վիճակա-գրության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 10.05.2002 թ. «Վարչական (տեղեկատվա-կան) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» N 109 որոշմամբ: Հրամանում պետք է ներառվեն՝ ● հաշվետվությունների ձևերը՝ ըստ գյուղատնտեսության առանձին բնագավառների հավաքագրման ենթակա համապատասխան ցուցանիշներով և ժամանակահատվածով, ● տեղեկությունների հավաքագրման, շտեմարանների ստեղծման և վարման ներքին ընթացակարգ՝ սահմանելով գործընթացի իրականացման հաջորդական քայլերի ժամկետները և պատասխանատուներին:	ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն	2011 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ
29. «Հայաստանի Հանրա-պետության գյուղատնտեսու-թյան նախարարության պաշ-տոնական ինտերնետային կայքի կառուցվածքի և սպասարկման մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանի մշակում և հաստատում	Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի կառուցվածքի և սպասարկման հարցերի կանոնակարգման նպատակով հրամանով սահմանել գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետները և պատասխանատուներին:	ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն	2011 թվականի ապրիլի 2-րդ տասնօրյակ
30. «Հայաստանի Հանրա-պետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ	Որոշման նախագծով ՀՀ կառավարության 05.09.2002թ. N 1516-Ն որոշման 8-րդ կետում նախատեսել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝ 1. միավորել «ե», «զ», «է» և «թ» կետերը և	ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն	2011 թվականի ապրիլի 2-րդ տասնօրյակ

կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	վերախմբագրել. 2. «ժդ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման ու մելիորացիայի (բարելավման) պետական ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ», 3. «ժզ» կետից հետո ավելացնել նոր՝ «ժզ[1]» կետ՝ հետևյալ խմբագրությամբ. «ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների մշակում և կազմակերպում, իրականացման մոնիթորինգ»:		
31. «ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների կազմակերպման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանի մշակում և հաստատում	Ընթացակարգով սահմանել գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների կազմակերպման գործընթացի հաջորդական քայլերի պատասխանատուներին և ժամկետները, մոնիթորինգի ցուցանիշները:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2011 թվականի մայիսի 2-րդ տասնօրյակ
32. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի N 583-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը 1) «Պետական անտառները համայնքային կազմակերպություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հայտի և հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանի մշակում և հաստատում	ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 4-ի «Պետական անտառները համայնքային կազմակերպություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը հաստատելու մասին» N 583-Ն որոշման մեջ փոփոխություններով պետք է՝ ● 3-րդ բաժնում ներառվեն անտառների հավատարմագրային կառավարման հանձնելու պահանջները, քանի որ բաժնում ներկայացված են միայն հանձնման պայմանները, ● 4-րդ բաժնում բացի հայտի ընդունման և մերժման պայմաններից ներկայացվեն նաև հավատարմագրային կառավարման հանձնումը մերժելու հիմքերը: ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 4-ի N 583-Ն որոշման հանձնարարականի կատարման ապահովումն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2011 թվականի մայիսի 2-րդ տասնօրյակ

33. «Հայաստանի Հանրապե-տության կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N 806-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը 1) «Պետական անտառների և անտառային հողերի օգտագործման տալու ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ գյուղա-տնտեսության նախարարի հրամանի մշակում և հաստատում	ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 24-ի «Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին» N 806-Ն որոշմամբ պետք է սահմանվեն՝ ● անտառօգտագործման տարբեր տեսակների համար պահանջները, ● անտառօգտագործման համար հայտի հետ ներկայացվող ծրագրերի նկատմամբ հիմնական պահանջները, ● անտառօգտագործման տարբեր տեսակների իրավունքի տրամադրման համար լիազոր մարմնի կողմից կազմակերպվող մրցույթների հիմնական պայմանները, ● անտառօգտագործման հայտերի մերժման հիմքերը: Ընթացակարգով պետք է սահմանվեն գործընթացի հաջորդական քայլերը, ժամկետները և պատասխանատուները՝ հստակ սահմանելով նախարարության աշխատակազմի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի պատասխանատվության շրջանակները, հստակեցվեն անհատույց և վճարի դիմաց անտառային հողերի օգտագործման տրամադրման և մերժման հիմքերը, կազմակերպվող միցույթների պայմանները, անտառօգտագործման յուրաքանչյուր տեսակի համար պահանջները: Հաստատել պետական անտառների և անտառային հողերի օգտագործման հայտի օրինակելի ձևը:	ՀՀ գյուղա-տնտեսության նախարարություն	2011 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. մարտի
Երևան